ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1437 05.08.2014թվ.

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ»
ՄՏԻՑ № 3211
«07» 08 2014

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը ցանկանում է *պարզաբանում* տալ Ձեր կողմից տրված 21.07.2014թ-ի թիվ 2/2-1-1767, թիվ 2/2-1-1768 և թիվ 2/2-1-1769 մեկնաբանություններին:

Միաժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ Դիտորդական խումբը պարզաբանում է համապատասխան գրություններում առկա փաստերը:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ № 6253
«07» 08 2014թ.

1. 21.07.2014թ. թիվ 2/2-1-1767 մեկնաբանություն.

   Դիտորդական խումբը 10.07.2014թ-ին թիվ 2621/1428 գրությամբ պարզաբանում է տվել 03.07.2014թ-ի թիվ 2/2-1-1591 մեկնաբանությանը, և ներկայացվածը պարզաբանումը մեկնաբանության կարիք չի ունեցել, որը կատարվել է թիվ 2/2-1-1767 մեկնաբանությամբ: Ներկայացված պարզաբանումով Դիտորդական խումբը ցանկացել է իրավիճակը ավելի մանրակրկիտ ներկայացնել:

   Դիտորդական խմբի համար անհասկանալի է տվյալ մեկնաբանության 5-րդ պարբերության բովանդակությունը <<*Հարկ է նշել, որ Դիտորդական խմբի կողմից ներկայացված հաշվետվություններին ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները տրվում է ՁՊՎ-ներում կատարված ստուգումների, անցկացված ծառայողական քննությունների, ինչպես նաև կոնկրետ փաստեր հաստատող փաստաթղթերի առկայության հիման վրա:* ***Հետևաբար նույն հարցադրումների շուրջ կրկնակի կամ երրորդ անգամ մեկնաբանություններ ներկայացնելը անիմաստ է***>>:

   Եվս մեկ անգամ հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի բաժնի միջանցքում <<Ի գիտություն ձերբակալվածների հարազատների>> պաստառը

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

փակցված չի եղել և խմբի համար անհասկանալի է կատարված ծառայողական քննության արդյունքները:

Ավելին՝ հայտնում ենք, որ յուրաքանչյուր ոչ հիմնավոր մեկնաբանության վերաբերյալ Դիտորդական խումբը ինքն է որոշում կրկնակի մեկնաբանություն կամ պարզաբանում պահանջել թե ոչ:

2. 21.07.2014թ. թիվ 2/2-1-1768 մեկնաբանություն.

Ինչ վերաբերվում է 4-րդ պարբերության մեջ նշված բովանդակությանը<< *Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Դիտորդական խումբը 2014թ-ի ընթացքում ոչ մի այցելություն չի կատարել ոստիկանության Արմավիրի ու Վաղարշապատի բաժինների ՀՊՎ-ներ: Արդյունքում դիտորդների խումբը խախտելով ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանի 14-րդ և խմբի գործունեության էթիկայի կանոնների 4.8 կետերի պահանջները՝ այցելություններ չկլատարելով վերը նշված բաժինների ՀՊՎ-ներ մեկնաբանություններ է պահանջում ՀՀ ոստիկանությունից: Այնինչ, ոստիկանության Արմավիրի բաժնի ՀՊՎ-ում 29.05.2014թ-ից ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՀՊՎ-ում 29.05.2014թ-ից հերթապահությունը իրականացվում է երկուական ոստիկանների կողմից*>>Դիտորդական խմբի համար անհասկանալի է՝ պարզաբանում.

- ✓ Եթե Ձեր կողմից ներկայացված մեկնաբանության մեջ, Դիտորդական խումբը խախտել է ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանի 14-րդ և խմբի գործունեության էթիկայի կանոնների 4.8 կետերի պահանջները, նշենք, որ դա կարգավորվում է ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանի 22-րդ կետի ե/ ենթակետով <<*խմբի անդամի լիազորությունների դադարեցում ՀՀ ոստիկանության պետի հրամանով, եթե խախտել է կարգով կամ խմբի գործունեության էթիկայի կանոնակարգով կամ ՀՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված դրույթները*>>:
- ✓ Դիտորդական խմբի կողմից ներկայացված 04.07.2014թ-ի թիվ 2621/1427 գրությանը հիմք է հանդիսացել Խմբի 22.11.2013թ-ի թիվ 2621/1387 գրությանը ՀՀ ոստիկանության կողմից տրված 20.12.2013թ-ի թիվ 2/2-1-3626 մեկնաբանության վեջին պարբերությունը. <<*Ինչ վերաբերվում է ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՀՊՎ-ներում հերթապահ ոստիկանների երկուական հաստիքներ ավելացնելուն՝ ապա այդ հարցը կքննարկվի ՀՀ ոստիկանությունում*>>:

Ավելացնենք, որ ոչ թե Դիտորդական խումբն է անտեսել որոշ իրավական ակտերի պահանջները և խախտել դրանք, այլ՝ ՀՀ ոստիկանությունը հաջորդիվ չի տվել Դիտորդական խմբին մեկնաբանություն՝ խմբի կողմից կատարված առաջարկության վերաբերյալ կատարված աշխատաքների մասին:

3. 21.07.2014թ. թիվ 2/2-1-1769 մեկնաբանություն.

04.07.2014թ-ին թիվ 2621/1425 գրությունը ներկայացնելուց հետո, Դիտորդական խումբը հանդիպում - քննարկում է ունեցել ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ մասերը սպասարկող վարչության հետ: Հանդիպման ընթացքում երկկողմանի փոխհամաձայնության ենք եկել, որպեսզի նշված գրության մեջ բարձրացված հարցը (խոսքը վերաբերվում է Դիտորդական խմբի կազմում փորձագետ ներգրավելուն) ներառվի Դիտորդական խմբի կողմից պատրաստվող և մոտ ժամանակներս ներկայացվող ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանում կատարվող փոփոխությունների մեջ:

Սակայն Ոստիկանության կողմից անհասկանալի պատճառներով անտեսվել է նախօրոք ձեռք բերված պայմանավորվածությունը և նշված հարցի վերաբերյալ տրվել է մեկնաբանություն հետևյալ բովանդակությամբ << *Այսպես, դիտորդների խմբի կազմում փորձագետի ընդգրկման վերաբերյալ Ձեր կողմից առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ այն պատճառաբանությամբ, որ ներկայումս դիտորդների խումբը համալրված է 9 անդամներով, իսկ վերոհիշյալ կարգի 4-րդ կետը հնարավորություն է տալիս խումբը համալրել մինչև 21 անձանցով, իսկ նույն կարգի 7-րդ կետը նախապատվությունը է տալիս իրավաբանի, հոգեբանի, մանկավարժի և բժշկի մասնագիտություն ունեցող անձանց, ուստի, եթե խումբը ձևավորվի կարգի նշված կետերին համապատասխան, ապա լրացուցիչ փորձագետի ներգրավման անհրաժեշտություն չի առաջանա*>>:

Դիտորդական խմբի համար անհասկանալի է ՀՀ ոստիկանության նման աշխատելաոճը և դիրքորոշումը:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1- 1983 «20» 08 2014թ.

Ձեր 05.08.2014թ. թիվ 2621/1437 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

1. Հայտնվում է, որ Ձեր 10.07.2014թ. թիվ 2621/1428 գրությամբ ներկայացրած հաշվետվությանը ՀՀ ոստիկանությունը 21.07.2014թ. թիվ 2/2-1-1767 գրությամբ տվել է հիմնավոր և սպառիչ մեկնաբանություն:

2. ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանի 14-րդ ու դիտորդների խմբի գործունեության էթիկայի կանոնների 4.8 կետերի պահանջները խախտելու համար (դիտորդների խմբի կողմից առանց այցելություններ կատարելու ոստիկանության բաժինների ՁՊՎ-ներ և ՀՀ ոստիկանությանը անհիմն հաշվետվություններ ներկայացնելը) ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանի 22-րդ կետի <<ե>> ենթակետի համաձայն, դիտորդների խմբի որևէ անդամի լիազորությունների դադարեցման վերաբերյալ հրաման չի արձակվել, քանի որ տվյալ դեպքում խախտումը թույլ է տրվել խմբի, այլ ոչ թե մեկ կամ երկու անդամի կողմից:

Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի 22.11.2013թ. թիվ 2621/1387 գրությանը ՀՀ ոստիկանության կողմից ոստիկանության Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ներում հերթապահության ծառայության կազմակերպման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն չտրամադրելուն, ապա հայտնվում է, որ 21.07.2014թ. թիվ 2/2-1-1768 գրությամբ հայտնվել է ոստիկանության Արմավիրի և Վաղարշապատի բաժիններում ՁՊՎ ոստիկանների հաստիքների ավելացման մասին, թեպետ ՀՀ ոստիկանությունում իրականացվող կազմ հաստիքային փոփոխությունների վերաբերյալ ոստիկանությունը որևէ պարտավորություն չունի հայտնել դիտորդների խմբին:

3. ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Ձեր 04.07.2014թ. թիվ 2621/1425 գրությունը ՀՀ ոստիկանության շտաբում քննարկվել է դիտորդների խմբի մասնակցությամբ:

Քննարկումների արդյունքում ՀՀ ոստիկանության կողմից 21.07.2014թ. թիվ 2/2-1-1769 գրությամբ տրվել է հիմնավոր և սպառիչ պատասխան:

ՀՀ ոստիկանության շտաբ